ԱՐԱՐԱՏ

ԹԻՒ ԺԱ.—ԵՐՉԱՆ ԺԳ. 1880 ՏԱՐԻ ԺԳ. ՆՈՅԵՄ. 31.

ԲԱՐԵՊԱՇՏ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ.

Մտածիր քրիստոնեայ, որ ամեն օր կմերձենաս դէպ ի մահը, դատաստանը և յաւիտենականութիւնը։ Ուստի ամեն օր մտածելու ես թէ՝ վերջին դատաստանին ի՞նչպէս արդարանաս։ Խնամով հսկէ քո բոլոր մտածմանց, գործոց և բանից վերայ, ըստ որում հաշիւ պիտի տաս նոցա համար։ Ամեն ժամանակ մտածիր, որ մահը կմոտենայ քեզ, վասն զի չգիտես այն վայրկեանը՝ յորում կարօղ է յափշտակել քո կեանքը։ Սորա համար ես մի՛ թողուր վաղուան ապաշխարութիւնդ և բարի գործոց կատարումը, ըստ որում վաղուեան օրը քո իշխանութեանդ ներքոյ չէ։ Անխուսափելի մահը կարելի է և քեզ կհասնի։ Զկայ այնչափ հակառակ բան բարեպաշտութեան, որչափ թողուլ ապաշխարութիւնը վաղուեան։ Եթէ չես ունկնդնում ներքին ազդման հոգւոյն սրբոյ, երբէք չես արժանանալ ճշմարիտ ապաշխարութեան։ Մի՛ թողուր քու ապաշխարութիւնը և բարի գործոց կատարումը մինչ ցծերութիւն, այլ ընդհակառակն՝ զոհիր երիտասարդութիւնդ Աստուծոյ, ըստ որում յայտնի չէ քեզ, պիտի հասնի՞ս արդեօք ծերութեան։ Անապաշխար մարդոյ երիտասարդութեան կորուստը անփախչելի է։ Ամենից յարմար Աստուծոյ ծառայելու համար երիտասարդական հասակն է, որ ունի մարմնոյ և մտաց առոյգ զօրութիւն։ Մարդոյ հաճոյանալու համար, կամ նորանից որպիսի եւ իցէ շնորհ ստանալու համար, մի՛ թոյլատրիր քեզ ոչ մի գործ չարութեան, ըստ որում ոչ թէ մահկանացու մարդ, այլ՝ Աստուած պիտի դատէ քո կեանքը։ Ուստի մի՛ յանդգնիր մարդկային ողորմութիւնը նա-

խոստասել Աստուծոյ ողորմութեան։ Փրկութեան ճանապարհում կամ արիութեամբ գնումն։ կամ յոգնումն. փորձիր քեզ և տես թէ՝ ունի՞ զորութիւն հաստանիլ բարեպաշտութեան։ թէ՝ վաստակած ես։ Կանգառնուլ Աստուծոյ ճանապարհի վերայ ուրիշ բան չէ։ բայց եթէ յետս դառնալ այդ ճանապարհից։ Ուրեմն աշխատէ։ որ հետզհետէ յառաջ այն ճանապարհով երթաս։ Քո վարմունքի մէջ ամենին ախորժելի եղիր։ ոչ ոքին ծանրութիւն մի՛ տար. մեծ ընկերութիւններից խորշէ. չարերու ընկերակցութիւնից հեռացիր որպէս ժանտախտից։ քանզի չար ընկերութիւնները լաւ բարքը կապականեն։ Աշխատիր որ՝ քո կեանքը վերաբերութեամբ առ Աստուած՝ բարեպաշտ լինի. անձիդ նկատմամբ խստապահանջ եղիր. իսկ առ ընկերն՝ արդարախոհ։ Քանի որ կենդանի ես՝ անդադար մտիր քո և քո չար գործոց համար։ այդպէս մեռցնելով զքեզ՝ կըզգաս դու։ որ Աստուծոյ համար ապրումես։ Ամեն ժամանակ ունեցիր սրտումդ ողորմութիւն։ դէմքիդ վերայ բարեհոգութիւն։ մտքիդ մէջ խոնարհութիւն։ հանդերձներիդ մէջ պարկեշտութիւն։ տրտմութեանդ մէջ համբերութիւն։ Ցաճախ մտածիր թէ ինչո՞ւ չես փախչում մեղքից։ ինչո՞ւ չես անում բարեգործութիւն։ և ինչո՞ւ կը կորցնես ի զուր ժամանակը։ Ընդ նմին դարձուր բարեխնամ ուշադրութիւն ժամանակաւոր կենաց կարճութեան վերայ։ փրկութեան դժուարութեան և սակաւութեան այն անձանց։ որք կ'հասնին այդ փրկութեան. մտածիր անդադար մահուան և դատաստանի վերայ։ Երեկոյեան զննիր քո օրւայ մէջ գործած մեղքերը։ իսկ շաբաթ օրը քննիր բոլոր հօթնեկի մէջ գործած մեղքերդ և աշխատիր զանոնք ուղղելու։ Երեկոյեան մտածիր թէ՝ որքան շատ մեղաւորներ չապաշխարելով նոյն օրը մտան դժոխք։ և գոհացիր զԱստուծոյ։ որ տուել է քեզ դեռ ևս ժամանակ ապաշխարութեան։ Ցաւելցրու աշխատութիւնդ առաքինութեան մէջ յառաջադիմելու համար. քանզի առաքինութիւնն է մայր մեղաց վերա զղջացող սրտերու. զղջացող սրտէ կ'ծնանի հեզութիւն։ հեզութեամբ կ'վաստակէ շնորհը։ օգնականութեամբ շնորհաց կ'պահպանի Աստուծոյ պատուիրանը. իսկ պահպանութիւն օրինաց՝ է նոյն իսկ առաքինութիւն։ Երկնչիր քո Տէր Աստուածից։ և գնա նորա ամեն ճանապարհովը և ծառայիր Աստուծոյ յամենայն սրտէ եւ յամենայն զօրութենէ քումմէ։

ՑԱստուծոյ վախցողները սպասումն նորա ողորմութեանը։ որ եթէ հեռանան այն ճանապարհից՝ կը կորչին։ Ցամենայն ժամ շնորհակալ եղիր Աստուծոյ և Հօր այն ամեն բանի համար։ զոր նորա Աջը քեզ կ'ուղարկէ։ Անմտութիւնից և հոգւոյ կուրութիւնից կ'ծնանի հպարտութիւնը. իսկ հանճարից և գիտակցութիւնից՝ խոնարհութիւնը։ Ուստի երբ փորձութեան մէջ ընկնիս՝ հնազանդէ. Տէրը տեսնելով քո անզօրութիւնը՝ կ'զօրացնէ զքեզ. իսկ եթէ հպարտանաս։ յայնժամ կ'զրկէ զքեզ իւր պաշտպանութիւնից և կ'կործանիս։ Զգուշացիր սուտ խօսելուց։ ըստ որում նա կ'հանէ քեզնից Աստուծոյ երկիւղը։ Փախիր բոլորովին այն ամեն բանից։ որ կ'տանեն զքեզ դէպ ի մեղքը։ Բարեգործութիւն արա։ վասն զի բարեգործնե-

րըն Աստուծոյ որդիքն են, իսկ չարագործները՝ որդիք խաւարի. Նո՛ր շրթամբք, աչքերով եւ ականջներով, այսինքն՝ մեզմէ տեսանելիքդ ու լսելիքդ, վասն զի առանց այդպիսի լռութեան չես կարող գործել առաքինութիւն. Աշխատի՛ր երկնքի համար և անդադար աշխատի՛ր, որ ազատ լինիս փորձութիւնից, աշխատի՛ր շահաւէտութեամբ, որ լինիս հաճոյ Աստուծոյ. աշխատի՛ր հնազանդութեամբ, որ Աստուծոյ աչքը վրադ դարձընես, վասն զի թէ որ չ'յարատեւես այդպիսի աշխատութեան մէջ՝ մի՛ յուսար արժանանալ երկնքին. Մի՛ մոռանար, որ Աստուած ներկայ է ամեն տեղ, ամեն բան կ'տեսնէ, ամեն բան կ'լսէ և ամեն բան գիտէ. Աստուածամօրդը իւրեն անձը զոհեց քեզ համար, ուստի և դու քո անձդ զոհէ՛ր ընկերիդ համար. ըստ որում՝ ամենալաւ կեանքն այն է՝ որ օգուտ է ընկերին. Իշխանաց և մեծաւորաց ցոյց տո՛ւր խոնարհութիւն և հնազանդութիւն. քեզ հաւասար եղօղներին տո՛ւր բարի խորհուրդ և հարկաւոր օգնութիւն, փոքրերին ցոյց տո՛ւր ներողամտութիւն և բարի խրատ տո՛ւր. Թող քո մարմինը մտացդ լինի հնազանդ. իսկ միտքդ՝ Աստուծոյ. Լուացի՛ր քո մեղաց և յանցանաց վերայ, աշխատելով ուղղել քո սիրտը. շատ մի՛ հոգար ներկայ ժամանակաւոր բարեաց համար, այլ յամենայն սրտէ զինի՛ր յաւիտենական կենաց երջանկութեանը. Միտքդ բե՛ր մահը, որ դադարես մեղանչելուց. միտքդ բե՛ր Աստուծոյ դատաստանը, որ վախենաս նորանից, և Նորա ողորմութիւնը, որ չ'տարակուսիս. Որքան կարես փախի՛ր աշխարհից եւ յանձնի՛ր զքեզ Աստուծոյ. անդադար մտածի՛ր այն թէ՝ ո՛րքան դժուար է պահպանել անմեղութիւնը, հեզութիւնը և բարեպաշտութիւնը աշխարհային վայելից և հարստութեան մէջ. ցանկացի՛ր հաճոյ լինել միայն Աստուծոյ. Անդադար աղօթէ՛ առ Աստուած, որ Նա պարգեւէ քեզ այն՝ ինչ որ համաձայն է Նորա կամաց և քո զօրութեանը. աղօթէ՛ր և խնդրէ՛ր Նորանից, որ Նա անցեալ գործած մեղքերդ մոռացման տայ և ինքը կարգադրէ քո ապագայ վիճակը դէպ ի լաւը. Ոչ միայն կերպարանի՛ր՝ այլեւ արդեամբք գործոց եղի՛ր այնպէս, ինչպէս որ կուզես համարուիլ մարդկանցից. Աստուած չի դատի առ երես, այլ ճշմարտութեամբ, և գիտէ մարդոյ սրտի ծածուկը. Զգուշացի՛ր շատախօսութիւնից, ըստ որում՝ շատախօսութեամբդ ազատ չես մնալ մեղքից, վասն զի լաւ է ընկնիլ բարձրից քան թէ լեզուից և ամեն դատարկ բանի համար պիտի տաս հաշիւ Քրիստոսի ահեղ ատենի առջեւ. — Ինչպէս էլ լինին գործքերդ, Նոքա սերմանումն որպէս սերմն յաւիտենականութեան մէջ. Եթէ մարմնոյդ մէջ սերմանես, մարմնինցդ ապականութիւն կ'հնձես, իսկ եթէ հոգւոյդ մէջ՝ հոգուցդ յաւիտենական կեանք կ'հնձես. Զկնի մահուանդ ետեւէդ չեն գար աշխարհային արժանիքդ և ո՛չ ժողոված հարստութիւններդ, ո՛չ ուրախութիւնը, ո՛չ ունայնութիւնը, այլ քո գործերը ետեւէդ պիտի գան. Ինչպէս որ կ'կամենաս երեւալ դատաստանի մէջ, այնպէս երեւցի՛ր այժմեն Աստուծոյ առաջ. Աշխատի՛ր նկատել քեզնում ո՛չ թէ բարի գործը, այլ այն՝ ինչ որ պակասում է քեզ. մի՛ հպարտանար քեզ տուած բանով,

պլ՝ խոնարհիր, որ չ'տուածը ստանաս։ Սովորիր ապրիլ՝ քանի որ ապրիլ կարող ես, ըստ որում այս կենաց մէջ յաւիտենական կեանքը կամ՝ ձեռք կ'ձգուի և կամ կ'կորսուի։ Մահից յետոյ ժամանակ չի լինի աշխատելու, այլ կ'լինի վարձատրութիւն իւրաքանչիւրոց ըստ գործոց։

Այսպիսի սրբազան մտածողութիւնից կ'ծագի քեզնում գիտակցութիւն, գիտակցութիւնից՝ բարեպաշտութիւն, և բարեպաշտութիւնից՝ անընդհատ աղօթք։ Մեծ է այն բարին՝ որ կ'ծառայէ սրտի հանգստութեանը։ Եթէ միտը կ'սանձէ իւր բերանը և լեզուն դատարկաբանութիւնից, լռութիւնը կմտցնէ Աստուծոյն, իսկ դատարկախօսութիւնը կ'հեռացնէ Նորանից։ Երբ բերանը խցած լինի լռութեամբ, հոգին ուրախութեամբ առ Աստուած կ'բարձրանայ։ Իսկ դատարկախօսութեամբ ամէն բարեպաշտութիւն կ'կորսուի։ Ուստի մի՛ զարմանար, եթէ սառն ես աղօթքի ժամանակ։ Որքան հեռու լինիս աշխարհից, այնքան աւելի Աստուծոյ առաջև կ'փառաւորուիս։ Այն խնդրիր քո Տէր Աստուածանից, ինչ որ ունենալ կցանկաս, և ամէն ունեցածդ էլ ընծայիր Աստուծոյն։ Անարժան է նոր բարութիւն ստանալ նա՝ որ շնորհակալ եղած չէ առաջուայ ստացածի համար։ Ի հարկէ կ'ցամաքի այն տեղ բարութեան աղբիւրը՝ ուր չ'կայ պարտուպատշաճ շնորհակալութիւնը։ Աջն Աստուծոյ ինչ որ ուղարկէ քեզ վերայ՝ այն ամէնը դարձուր քո բարութեան և դաստիարակութեան։ Եթէ քեզ պատահի՞ որպիսի և իցէ բարեբաղդութիւն, մտածիր՝ որ պարտաւոր ես փառաւորել և օրհնել քո Տէր Աստուածը։ Իսկ եթէ թշուառութեան հանդիպիս՝ գիտցիր որ սա կ'գոգոռէ զքեզ յապաշխարութիւն և ի դարձումն առ Աստուած։ Քո իշխանութիւնը ցոյց տուր ընկերիդ օգնութեամբ, հարստութիւնը՝ բարերարութեամբ, իսկ խելքդ՝ խրատելով։ Թող չ'յաղթէ քեզ թշուառութիւնը և չ'ձգէ հպարտութեան մէջ շարունակ բաղդաւորութիւնը։ Թող լինի քեզ օրինակ Քրիստոսը՝ քո թանկագին Փրկիչը՝ որոյ ճանապարհին և պանդխտութեան հետևիր՝ որ արժանանաս մտնել նորա հայրենեաց մէջ։ Քո ամէն գործոց մէջ ցոյց տուր յաւէտ ամենախորին հեզութիւն և ջերմեռանդն սէր։ Սէրը պէտք է բարձրացնէ քո սիրտը առ Աստուած՝ որ ամուր կենաս Նորա մօտ, իսկ խոնարհութիւնը պէտք է ցածացնէ քո սիրտը՝ որ չընկնես հպարտութեան մէջ։ Համար է Աստուածն Հայր՝ ըստ ողորմածութեան, Տէր՝ ըստ իշխանութեան։ Հայր՝ ըստ հեզութեան, Տէր՝ ըստ սաստկութեան։ Սիրէ զնա որպէս զՀայր, և երկնչիր Նորանից որպէս ի Տեառնէ։ Սիրէ զնա՝ վասն զի նա կամենումէ սէր։ երկնչիր Նորանից՝ վասն զի նա ատումէ մեղքը։ Երկնչիր ի Տեառնէ՝ յոյսդ դիր Նորա վերայ։ ծանիր քո սեպհական չքաւորութիւնը և փառաւորիր Նորա շնորհները։

Ո՛վ Դու՝ որ Աստուածային նախախնամութեամբ կատարելապէս քեզ յանձն եղած մարդոյն նոյն իսկ մեծամեծ թշուառութեանց մէջ ցոյց կ'տաս Հայրական օգնութիւնը՝ արա զմեզ ըստ հաճոյից քոց։

«Հաստատեա զշաւիղս իմ ի ճանապարհի քում, զի մի՛ գայթագղեսցին գնացք իմ»։ (Սաղմ. ԺԶ. 5.)։

Թարգմ. Գէ. Եղ. Աբաճըլեանց

ԿԼԻՄԱՅ

Կլիմաների դասաւորութիւնը.— Կլիմաների յառաջանալու գլխաւոր պատճառըն այն է, որ արեւը երկրիս մակերեւոյթի զանազան մասերը միատեսակ չէ տաքացնում։ Այն երկիրները, ուր արեւի ճառագայթները տարւայ մեծ մասը ընկնում են ուղղակի, ունին տաք կլիմայ, օրինակ, հասարակածի մօտ և արեւադարձի դէպի հիւսիս և հարաւ եղած երկրների մօտ։ Իսկ ուր արեւի ճառագայթները ընկնում են շատ կամ քիչ անուղղակի կերպիւ, այնտեղ նորանք կորցնում են իւրեանց զօրութեան մեծ մասը, և որքան աւելի մօտ է բեւեռներին՝ այնքան աւելի սառն է լինում կլիման, և վերջապէս արեւը, որ հազիւ է բարձրանում հորիզոնի վերայ.— մինչև անգամ բեւեռային ամառւայ ժամանակ, երբ նա ամբողջ շաբաթներով ու ամիսներով մայր չէ մտնում, հազիւ հազ կարողանում է բեւեռային ծովերի սառոյցը հալեցնել. Մէկ կլիմայի դէպի միւսը անցնելը համարեա աննկատելի է, և երբեմն եւս բաւական նկատելի է լինում, ընդհանրապէս օրւայ միջին ջերմութիւնը, որով կարելի է քննել մօտաւորապէս կլիմայի յատկութիւնը, հաւասար է մօտաւորապէս իւրաքանչիւր 15 աշխարհագրական մղոնում.— հասարակածից դէպի երկու բեւեռները, Րէօմիւրի ½° աստիճանին։ Այսպէս հասարակածային երկիրների տարւայ օդի միջին ջերմութիւնը 26° աստիճանից աւելի է լինում մինչդեռ Վեննայում, որ հիւսիսային լայնութեան 48 աստիճանի տակ է ընկած, լինում է 10°, իսկ Մելվիլ կղզում, և հիւսիսային Ամերիկայում, որոնք գտնւում են հիւսիսային լայնութեան 74 և 75° աստիճանի տակ, տարւայ միջին ջերմութիւնը հաւասար է 18 աստիճանի։

Ծովերի ազդեցութիւնը կլիմայի վերայ.— Հասարակածից հաւասարապէս հեռացած տեղերը չունին միշտ միևնոյն կլիմայ, որովհետև երկրիս մակերեւոյթի որպիսութիւնը և ձեւը մեծ ազդեցութիւն ունին տաքութեան տարածման վերայ, սա եւս մեծ ազդեցութիւն ունի կլիմայի վերայ։ Մեծ ջրամբարների մօտաւորութիւնը բաւական չափաւորում է կլիման։ Ինչպէս որ յայտնի է՝ ջուրը աւելի ուշ է տաքանում քան թէ երկիրս, այսինքն նորան տաքացնելու համար հարկաւոր է աւելի մեծ տաքութեան աստիճանը, քանթէ մի այդպիսի երկրին։ Ուստի և ջուրը սառչում է աւելի ուշ քան թէ երկիրս. որով և ովկիանոսները և ծովերը դառնում են ջրի յատկութեան պատճառաւ մի ահագին տաքութեան պահարան՝ որը մեղմացնում է հասարակածից հաւասար կերպով հեռացած երկիրների կլիմայն հակառակ նրան, որ պիտի լինէր առաջ։ Ընդհակառակն, երբ մի երկիր աւելի հեռու է